

ՄՓՅՈՒՌԱՆՆԵՐ ԿՅԱՆՔ ԺԻՅՆԻ ԶԱՐԱԲԵՅՆԻՔԻ ԱՐՄԻԱ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԸ ՄՓՅՈՒՐՔՈՒՄ

(1964 թ. հունվար-հունիս)

Բարդարիա

«Երևան» մշակութային միության Պլովդիվի մասնաճյուղի թատերախումբը, որը հիմնականում բաղկացած է երիտասարդներից, մարտամասին բեմադրող Ա. Մխիթարյանի և դերուսույց Խ. Յազեյանի ղեկավարությամբ, հերկայացրեց Սոլիերի «Ակամա բժիշկ» կատակերգությունը։ Բեմադրության հաջողությանը մեծապես նպաստեց նաև «Սայաթ-Նովա» նորակազմ կվարտետը, որը իրականացրեց պիեսի երաժշտական ձևավորումը։

(«Երևան», Սոֆիա)

* * *

Բուլղարիայի կոմունիստական կուսակցության հրատարակչությունը լույս է բնծայել «Հեղափոխական մարտիկներ» շարքի նոր հատոր՝ նվիրված Բուլղարիայի կոմունիստական կուսակցության ականավոր գործիչ Ստեփան Շահբազյանին։ «Ստեփան Շահբազյան» գրքի հեղինակն է Միթրո Իվանովը։

(«Երևան», Սոֆիա)

ՄԱՌ

Փետրվար ամսին Կահիրեի հայկական բնօրհանը նախաձեռնությամբ տեղի ունեցավ հանգես՝ նվիրված անվանի հայ կին գրող-մանկավարժ Սիպիլի (Զապել Ասատուր) ծննդյան 100-ամյակին։ Սիպիլի կյանքի ու գործի մասին զեկուցեց երիտասարդ ուսուցչուհի Վ. Տատուրը։ Սրահի երիտասարդ ուժերի միջոցով բեմադրվեց Սիպիլի «Հարս» պիեսը։

(«Զահակիր», Կահիրե)

* * *

Եդիպտոսի «Արվեստի» բարեկամների ընկերությունը կազմակերպել է գեղարվեստական 40-րդ ցուցահանդեսը, որին մասնակցում էին 112 նկարիչներ ու քանդակագործներ։ Ծուցահանդեսի լավագույն գործերից են ճանաչվել եգիպտահայ հայտնի նկարիչ Ս. Սամսոնյանի

կտավները։ ՄԱՌ-ի մշակույթի նախարար Հ. Թեմր շնորհավորել է Ս. Սամսոնյանին, որն աշխատանքել է ցուցահանդեսի առաջին մրցանակին և ոսկե մեդալի։ Մեկ այլ հայ նկարիչ՝ Բ. Կոնստանյանը ստացել է խրախուսական մրցանակ։

(«Զահակիր», Կահիրե)

Հայկական ՍՍԲ ԳԼ ակադեմիկոս Գ. Դավթյանը հունիս ամսին սովետական մի խումբ գիտնականների հետ գտնվում էր Եգիպտոսում։ Կահիրեի հայ պարբերականների խմբագրությունները ընդունելություն կազմակերպեցին նրա պատվին։ Ընդունելության ժամանակ ակադեմիկոսը մանրամասն տեղեկություններ հաղորդեց հիդրոպոնիկայի ասպարեզում Հայաստանում կատարված աշխատանքների և Եգիպտոսի հողագործությանը սովետական գիտնականների ցույց տրվող օգնության մասին։ Գ. Դավթյանը նույն հարցերի շուրջ դասախոսել է նաև հայ գեղարվեստասիրաց միության կազմակերպած երեկոյին։

(«Արև», Կահիրե)

* * *

Կահիրեի հայկական մշակութային կազմակերպությունների և ՄԱՌ-ի լրագրողների միության նախաձեռնությամբ հանդիսավոր պայմաններում նշվեց հայտնի ծագրաբանական կյանքի բառասանամյա հորելյանը, որը ինչպես հայտնում է «Արև» թերթը, տեղի ունեցավ ՄԱՌ-ի փոխ-վարչապետ և Մշակույթի ու ազգային ուղղության նախարար Համբարձումյանի ղեկավարությամբ։ Հորելյանին ջերմորեն ողջունեցին ինչպես հայ, այնպես էլ արաբ արվեստագետներ ու լրագրողներ։ Հորելյանի առթիվ անվանի նկարիչը տարրեր երկրներից բազմաթիվ շնորհավորանքներ է ստացել։

(«Արև», Կահիրե)

Լիբրանոս

Այս տարվա հունվար ամսին Բեյրութի «Հառաջ» գրական շրջանակի նախաձեռնությամբ կազմակերպվել է սիմֆոնիկ համերգ նվիրված Սայաթ-Նովայի ծննդյան 250-ամյակին։ Տեղական ուժերից կազմված 35 հոգիանոց նվագախումբը Օնիկ Սյուրմելյանի ղեկավարությամբ կատարել է Սայաթ-Նովայի, Առնիտտի, Ա. Խաչատրյանի, Ալ. Սպենդիարյանի, Էդ. Միքաելյանի, Ալ. Հարությունյանի, Մ. Գանդրուսու, Պ. Ջալալյանի ստեղծագործություններից։ Բեյրութի մամուլը հատուկ ուշադրություն է նվիրել համերգին՝ հատկապես այն կապակցությամբ, որ դա եզակի դեպք է Լիբանանի կյանքում, որտեղ գեղես չկա մշտական սիմֆոնիկ նվագախումբ։ Լիբանանի ռադիոն ձայնագրել է համերգն ամբողջությամբ՝ հետագայում այն հաղորդելու համար։

(«Մեր նշանաբանն է հառաջ», Բեյրութ)

* * *

Նրկար դադարից հետո լիբանանահայ մշակութային միությունը վերսկսեց իր գործունեությունը։ Մարտի 21-ին Բեյրութի խոշորագույն սրահներից մեկում կայացավ միության լիակամակերպած մեծ համերգը, որին իրենց ակտիվ մասնակցությունն էին բերել քաղաքի պետական երաժշտանոցի հայ ուսանողները։ Համերգը ղեկավարում էր սփյուռքահայ անվանի երգահան Աշոտ Պատմապրյանը։ Բազմաթիվ մենակատարներ (երգչուհիներ Ս. Սողկյանը, Ժ. Գույումջյանը, Սրենան Կոնսերվատորիայի ուսանող Մ. Չատրյանը և ուրիշներ), երգչախումբը, սիմֆոնիկ նվագախումբը կատարեցին Բեթ-Նովենի, Վալենտինի, Կոմիտասի, Մոցարտի, Մյուսիկի ստեղծագործությունները։ Համերգի երրորդ բաժինը կազմված էր Ա. Պատմապրյանի գործերից։

(«Արարատ», Բեյրութ)

* * *

Հայկազյան կոլեջի հայագիտության ամբիոնի հրավերով մարտ ամսի վերջին Բեյրութ է ժամանել անվանի հայագետ Ֆրեդերիկ Ֆեյդին։ Ֆրանսիացի հայագետը կոլեջի ուսանողների համար հայերեն լեզվով դասախոսություններ է կարդացել զբարարի ու արդի հայերենի քերականության և հայ հին մատենագրության հարցերի վերաբերյալ։

(«Մեր նշանաբանն է հառաջ», Բեյրութ)

* * *

Միլանարնակ Նովանո Հյուսիսյանի նախաձեռնությամբ Բեյրութի Հովակիմյան-Մանուկյան վարժարանին կից 1964—65 ուստարվա-

նից գործելու է «Հայագիտական ուսմանց հիմնարկ»։ Ուսումնական այս նոր հաստատությունում սովորելու են Միրիայի, Իրանի, Եգիպտոսի և այլ երկրների հայ ուսանողներ, բացի լիբանանահայերից, որոնք ունեն հայկական երկրորդական վարժարանների վկայական կամ համապատասխան պատրաստություն։ Ուսման տեղությունը երեք տարի է լինելու, դասերը տեղի կունենան շարաթական շորս անգամ։ Նոր ուսումնարանի վարիչ է նշանակված գրող Վահան Վահանյանը։

(«Մեր նշանաբանն է հառաջ», Բեյրութ)

Իրան

Թավրիզում իրանահայ կազմակերպությունների նախաձեռնությամբ բաղվել է Շեքսպիրի գործերի լավագույն թարգմանիչ և գրականագետ Հովհաննես Մասեհյանի հուշարձանը։ Այդ առիթով տեղի ունեցավ հուշ-երեկո նվիրված Մասեհյանին։ Երեկոյին ներկայացվել է նաև «Օթելլո»-ի երրորդ գործողությունը։

(«Արև», Կահիրե, հունվար)

* * *

Թավրիզում տեղի է ունեցել Միքայել Սահակյան օրիորդաց միջնակարգ վարժարանի հանդիսավոր բացումը։

(«Արև», Կահիրե, մարտ)

Առաջան

Առաջանում կա փոքրաթիվ (շուրջ 800 հոգի), բայց բավական լավ կազմակերպված հայկական գաղութ։ Այստեղ գործում են դպրոց՝ իր մանկապարտեզով, երկու ակումբ, մարզադահլիճ, լողավազան։ Սկսված է հայ երիտասարդաց միության ակումբի նոր շենքի շինարարությունը։ Վերջերս միության ակումբում կազմակերպվեց երաժշտական երեկո, որի ժամանակ հանդես եկան ազգային վարժարանի նախկին սաները։ Կատարվեցին Ա. Խաչատրյանի, Բեթ-Նովենի և Մանուկյանի զբաղված գործերից։

(«Արև», Կահիրե, փետրվար)

Ուրուգվայ

Մոնտեվիդեոյում կազմակերպվել է հայկական երգի և երաժշտության կատարողների մրցանակարաշխություն։ Ժյուրիի կազմի մեջ մտել են Ռուրուգվայի մի շարք հայտնի երաժշտագետներ։ Մրցանակարաշխության համար առաջադրված են եղել կատարելու Առնո Բարաջանյանի «Առաջին սիրո երգը», Ա. Այվազյանի «Երևանարան», Ալ. Սպենդիարյանի «Հեղաղ»-ը՝ դաշնամուրի համար և Աշոտ Սաթյանի «Գավիթ Բեկ» օրատորիայից Գայանեի արիան։ Լավու-

զույն կատարողները արժանացել են ոսկե, արծաթե և բրոնզե մեդալների:

(«Սևան», Բուենոս-Այրես)

Իսապիա

Վենետիկում Մեսրոպ Ճանուշյանի թարգմանությամբ հրատարակվում են Սայաթ-Նովայի խաղերը իտալերեն լեզվով: Ժողովածուի մեջ զետեղվելու են նաև տասներկու հայերեն և վեցական վրացերեն ու ադրբեջաներեն բանաստեղծություններ:

(«Ջահակիր», Կահիրե, հունվար)

Անգլիա

Պրոֆեսոր Սիրարփի Տեր-Ներսիսյանը Լոնդոնի համալսարանի կողմից հրավիրվել է մի շարք դասախոսություններ կարդալու բյուզանդագիտական և հայ մանրանկարչության հետ կապված հարցերի շուրջ: Լոնդոնի հայ գաղութը կազմակերպել է երեկո, որտեղ Սիրարփի Տեր-Ներսիսյանը հանդես է եկել Կիլիկյան շրջանի հայկական մանրանկարչության մասին: Դասախոսությամբ նրան կոչվել է եղել պրոֆեսոր Դուուսեթը:

(«Արև», Կահիրե, փետրվար)

Ֆրանսիա

Փարիզում հրատարակվել է Ա. Գրիգորյանի «Էվերեկ-Ֆենեսի հիշատակարան» գիրքը: Ուսուցիչները են Էվերեկ-Ֆենեսի մեջ ապրող հայերի կենցաղը, նրանց անցյալը, տեղական բարրաոճի առանձնահատկությունները: Հատուկ տեղ է հատկացված մշակութային ու ժողովրդական ստեղծագործությանը: «Հիշատակարանը» պատկերազարդ է և բաղկացած է հազար էջից:

(«Արարատ», Բեյրութ, փետրվար)

* * *

Ֆրանսիայի մի շարք հասարակական կազմակերպությունների և ֆրանսահայ մշակութային միության կողմից փետրվար ամսին Փարիզի կոնսերվատորիայի դահլիճում հանդիսավորությամբ նշվեց Միսաք Մանուշյանի և իր ընկերների գեղասկսարման 20-րդ տարեդարձը: Երեկոյին ներկա էին ֆրանսիական մշակութի և հասարակական անվանի գործիչներ Լուի Արագոնը, Էլզա Տրիդեն, Պոլ Անթոնյանը, Ֆրանսուա Մորիակը, Բենուա Ֆրաշոնը, Նախկին գինյութականների Ներկաների մեջ էին նաև Ե.Բ.Մ. Լեհաստանի, Հովհաննիսյանի և Իսրայելի դիմանադիտական ներկայացուցիչներ:

Նրանցից գեղարվեստական բաժնում կատարվեցին դիմադրական շարժմանը նվիրված եր-

գեր, «Կոմեդի ֆրանսեզ»-ի դերասան Դանիել Բվերնելը արտասանեց Արագոնի «Կարմիր աֆիշը», և կարգաց Մանուշյանի վերջին նամակը լանտից:

Ֆրանսահայ մշակութային միությունը և ֆրանսահայ երիտասարդական միությունը Անժամբ ճանաչում հմա և «Հայաստանի ճարտարապետությունը» կինոնկարների ցուցադրումից ստացված հասույթը հատկացրել են Մանուշյանի և նրա ընկերների հուշարձանի կառուցմանը:

(«Աշխարհ», Փարիզ)

* * *

Գալուստ Գյուլբենկյան հիմնարկության հայկական մատենաշարի տասներորդ հրատարակությունը ընդգրկում է ականավոր գիտնական Հ. Մանուշյանի «Տիգրան երկրորդ և Հոսմ աշխատությունը: Դիրքը ֆրանսերեն է թարգմանել Փարիզի Արևելյան լեզուների վարժարանի Նախկին ուսուցիչ Հրանտ Թորոսյանը: Առաջաբանում ֆրանսիական ակադեմիայի անդամ Փարիզի Պարկոբինոն դրվատանքով է խոսում Հ. Մանուշյանի արժեքավոր աշխատության մասին:

(«Աշխարհ», Փարիզ, ապրիլ)

* * *

«Յունեսկո»-ի նախաձեռնությամբ ֆրանսիական «Կալիմար» հրատարակչությունը լույս է րնծայել հայ ժողովրդի անմահ էպոս «Մասունցի Դավիթը»: Էպոսը ֆրանսերեն է թարգմանել անվանի հայագետ, պրոֆեսոր Ֆրեդերիկ Ֆեյդին: Դրքի առաջաբանը պատկանում է ակադեմիկոս Հովսեփ Օրբելու գրչին: Բր ներածականում պրոֆ. Ֆ. Ֆեյդին գրում է. «Կր հուսանք թե, հակառակ կարգ մը անկատարություններով, ֆրանսերենի այս վերածումը թույլ պիտի տա արևմտյան ընթերցողներուն ընդունել այս ժողովրդական հրաշապատում դուցազներգության բովանդակ հմայքը: «Աշխարհ» թերթը նշում է, որ թարգմանիչը «ամբողջ դուցազներգության հստակ ու վճիտ պատկերը կուտա հարազատ թարգմանությամբ մը, խուսափելով թարգմանությունը ֆրանսականացնելու ճիգեն»:

(«Աշխարհ», Փարիզ)

* * *

Դ. Դեմիրճյանի «Վարդանանք» վեպը վերջերս ֆրանսերեն թարգմանությամբ լույս է տեսել Փարիզում: Մի խումբ ֆրանսահայեր Վարդանանք հերոսամարտը էլ ավելի հայտնի դարձնելու համար որոշել են նկարահանել վեպը: Ֆիլմի սցենարը գրելու է լայն ճանաչում ստացած գրող Վահ Քաչան, ֆրանսիական հայտնի կինոսեծիսյոր Հանրի Վերնյոն (Աշոտ Մալաթ-

յան) ստանձնել է նկարահանման պարտականությունը։ Ֆիլմի նկարահանմանը մասնակցելու են նաև նկարիչ Գառգուն (Գառնիկ Զուլումյանը) և երգիչ Շարլ Ազնաուրը։

(«Ջահակիր», Կահիրե)

ԱՄՆ

Նյու-Յորքում արտադրվել է հատուկ ձայնապնակ՝ Սայաթ-Նովայի երգերով։ Ձայնապնակի վրա գրանցված են Սայաթ-Նովայի 7 երգերը՝ սովետահայ երգիչների կատարմամբ և 9 պարեղանակներ։ Մեծ երգչի երգերը և համառոտ է ենսագրությունը հայերեն և անգլերեն լեզուներով գետնգրված են ձայնապնակի գեղեցիկ ծրարի վրա՝ նկարիչ Պարզև Սաղաթելյանի ձևավորմամբ։

(«Էրարեր», Նյու-Յորք, Նովա)

* * *

Ամերիկահայ հայտնի երգիչ Մայքլ Քրմոյանը վերսերս չրավեր է ստացել հանդես գալու Նյու-Յորքի «Միտրոպոլիտեն» և Ման-Յրանցիակոի օպերաներում՝ գլխավոր դերերգերով։ Սան-Ֆրանցիսկոյի օպերայում նա մասնակցելու է նաև Շոստակովիչի «Կատերինա Իզմայլովա»-ում, որն առաջին անգամ է բեմադրվում ԱՄՆ-ում։

(«Պարար», Բոստոն, մայիս)

* * *

Ամերիկյան կինոգործիչ Դուդուին Մեյերը նախաձեռնել է նկարահանել Յրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» վեպը։ Նա պատրաստել է ֆիլմի սցենարը և 1965 թ. սկզբից սկսելու է նկարահանումները։ Բազրատյանի դերի համար հրավիրվել է արար արտիստ Ռմար Շերիֆը։ Սա երկրորդ անգամը կլինի, որ Շերիֆը կինոյում կկատարի հայի դերը։ Առաջին անգամ նա հանդես էր եկել «Հոռմեական կայսրության անկումը» ֆիլմում հայոց թագավորի դերով։

(«Ջահակիր», Կահիրե)

* * *

Մայիսի սկզբին Բոստոնում տեղի է ունեցել նշանավոր երգահան Հ. Բերրերյանի նվագահանդեսը։ Առաջին քառնում Բերրերյանի ղեկավարությամբ երգչախումբը և մեներգիչներ Ֆլորա Մարտիկյանը, Դորիս Ահարոնյանը, Քերի Պապիկյանը, Ջորջ Հարությունյանը, Համեստ Աղամյանը կատարել են Սայաթ-Նովայի, Կոմիտասի, Սաթյանի, Բերրերյանի գործերը։ Երկրորդ քառնում երգչախումբը, նվագախումբը և մեներգիչները Բերրերյանի ղեկավարությամբ ներկայացրել են Ա. Զուխաճյանի «Կարինե» օպերայի առաջին գործողությունը։

(«Պարար», Բոստոն)

Վ. ԵՐԿԱՆՅԱՆ